Հավելված N 10
ՀՀ տնտեսական զարգացման և
ներդրումների նախարարի
2018 թվականի հունիսի
29-ի N 481-Ա հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԵՎՐԱՍԻԱԿԱՆ ՏՆՏԵՍԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՐՏԱՔԻՆ ԱՌԵՎՏՐԻ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Եվրասիական տնտեսական միության և արտաքին առևտրի վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) հանդիսանում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման և ներդրումների (այսուհետ՝ Նախարարություն) հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում:

2. Վարչությունը իր գործունեությունն իրականացնում է Հայաստանի Հանրապետության օրենսդրության, նախարարության կանոնադրության, նախարարի և գլխավոր քարտուղարի հրամաններին, ինչպես նաև սույն կանոնադրության պահանջներին համապատասխան:

3. Վարչությունն իր իրավասությունների շրջանակներում պատասխանատվություն է կրում իր վրա դրված խնդիրների և գործառույթների ժամանակին և պատշաճ իրականացման համար:

4. Վարչության կանոնադրությունը հաստատում, փոփոխում և ուժը կորցրած է ճանաչում նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

II. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

5. Վարչության հիմնական խնդիրներն են՝

1) իր իրավասության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության համար համապատասխան իրավապայմանագրային դաշտի ստեղծումը,

2) իր իրավասության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության հետ Հայաստանի Հանրապետության տնտեսական հարաբերությունների, ինչպես նաև դրանցից բխող միջոլորտային բարեփոխումների համադրումը և համակարգումը,

3) արտաքին առևտրի խթանման համար բարենպաստ միջավայրի ապահովումը:

III. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ ԵՎ ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ

5. Վարչության կառուցվածքն ու հաստիքացուցակը հաստատում է նախարարը՝ նախարարության գլխավոր քարտուղարի ներկայացմամբ՝ նախապես համաձայնեցնելով վարչության պետի և համակարգող պաշտոնատար անձի հետ:

6. Վարչությունը՝

1) իր իրավասության շրջանակներում կազմակերպում և իրականացնում է աշխատանքներ՝ համագործակցելով նախարարության այլ ստորաբաժանումների, Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների, ինչպես նաև միջազգային կազմակերպությունների հետ,

2) Նախարարության այլ ստորաբաժանումների հետ համատեղ, ինչպես նաև անհրաժեշտության դեպքում Հայաստանի Հանրապետության շահագրգիռ նախարարությունների և գերատեսչությունների հետ համագործակցելով, նախապատրաստում է Վարչության գործունեության ոլորտին վերաբերող օրենքների և իրավական այլ ակտերի նախագծեր,

3) Հայաստանի Հանրապետության կառավարության գործունեության ծրագրին համապատասխան հաստատման է ներկայացնում Վարչության ծրագրերը, ինչպես նաև ապահովում է դրանց կատարումը:

7. Վարչության աշխատանքների ղեկավարումը իրականացվում է Վարչության պետի կողմից:

8. Վարչության պետը՝

1) իրականացնում է Վարչության աշխատանքների կազմակերպումը և ընդհանուր ղեկավարումը,

2) պատասխանատու է Վարչությունում համապատասխան աշխատանքային մթնոլորտի և կարգապահության ապահովման, Վարչությունում աշխատողների միջև աշխատանքների հավասարաչափ բաշխման և դրանց կատարման համար,

3) բացահայտում, վերլուծում և գնահատում է Վարչության առջև դրված գործառույթներից բխող մասնագիտական նշանակության խնդիրներ, ինչպես նաև դրանց տալիս է սռեղծագործական և այլընտրանքային լուծումներ կամ ապահովում այդ աշխատանքների կատարումը,

4) անմիջական հաշվետու է նախարարին:

IV. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունը իր նպատակների և խնդիրների իրականացման համար Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է հետևյալ գործողությունները՝

1) իր իրավասության շրջանակներում համակարգում և իրականացնում է Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության աշխատանքները,

2) իրականացնում է Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Կոլեգիայում և Եվրասիական տնտեսական միության հանձնաժողովի Խորհրդում քննարկվող հարցերի վերաբերյալ հայկական կողմի դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

3) իրականացնում է Եվրասիական տնտեսական միության Բարձրագույն խորհրդի և Եվրասիական տնտեսական միության Միջկառավարական խորհրդի օրակարգում քննարկվող հարցերի վերաբերյալ նախարարության դիրքորոշման ձևավորումը և ներկայացումը,

4) իրականացնում է Եվրասիական տնտեսական միության կառույցներին ներկայացվող նախարարության առաջարկությունների նախապատրաստման գործընթացի կազմակերպումը,

5) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է մաքսասակագնային և ոչ սակագնային կարգավորմանն ուղղված միջոցառումների մշակում և Եվրասիական տնտեսական միության չափանիշներին համապատասխանեցում,

6) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ երրորդ երկրների հետ ազատ առևտրի գոտու ստեղծման և առևտրատնտեսական համագործակցության մասին համաձայնագրերի և հուշագրերի մշակում և դրանցից բխող միջոցառումների իրականացում,

7) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի պաշտպանության և հակագնագցման միջոցների կիրառման քաղաքականությունը,

8) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է ներքին շուկայի գործառնության շրջանակներում Եվրասիական տնտեսական միության խոչընդոտների, սահմանափակումների և արգելքների բացահայտմանը և վերացմանն ուղղված միջոցառումներ,

9) Եվրասիական տնտեսական միության հետ համագործակցության շրջանակներում իրականացնում է տնտեսվարող սուբյեկտների անբարեխիղճ գործունեությունից սպառողների իրավունքների պաշտպանության հավասար պայմանների ձևավորմանն ուղղված միջոցառումներ,

10) մշակում է արտաքին առևտրի քաղաքականությունը և իրականացնում է դրա դիտանցումը,

11) իրականացնում է արտաքին տնտեսական գործունեություն իրականացնող առևտրային կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի, նրանց շահերը ներկայացնող միավորումների և այլ կազմակերպությունների հետ համագործակցության աշխատանքներ,

12) մասնակցում է արտաքին առևտրի ոլորտում գործարար և ներդրումային միջավայրի բարելավմանն ուղղված քաղաքականության մշակմանը,

13) մշակում է բարենպաստ առևտրային ռեժիմների ձևավորման հեռանկարային և առկա շուկաներ մուտք գործելու խոչընդոտները վերացնելու ուղղությամբ միջոցառումներ,

14) մշակում է առաջարկություններ Հայաստանի Հանրապետության համար արտոնյալ և/կամ բարենպաստ առևտրային ռեժիմ ունեցող շուկաների մուտքի առկա խոչընդոտների վերացման, մուտքի հնարավորությունների ընդլայնման և հայրենական ապրանքները արտերկրի հեռանկարային շուկաներում ներկայացնելուն ուղղված միջոցառումների իրականացման ուղղությամբ,

15) ուսումնասիրում և վերլուծում է արտաքին շուկաները և ներկայացնում առաջարկություններ տեղական արտադրողների համար արտաքին շուկաների հասանելիության, ինչպես նաև արտահանման խթանման վերաբերյալ,

16) իրականացնում է առևտրատնտեսական համագործակցության ընդլայնմանն ուղղված Արտոնությունների ընդհանրացված համակարգի /GSP/ /GSP+/ կիրառման հետ կապված միջոցառումներ,

17) ապահովում է ապրանքների ծագման երկիրը որոշման միասնական քաղաքականության իրականացումը,

18) մասնակցում է օտարերկրյա պետությունների և միջազգային կառույցների հետ առևտրատնտեսական համագործակցության աշխատանքներին,

19) մասնակցում է Հայաստանի Հանրապետության տնտեսական զարգացման խնդիրներով պայմանավորված՝ առանձին ապրանքների արտահանման և (կամ) ներմուծման արգելման կամ քանակական սահմանափակումների ուղղությամբ քաղաքականության մշակմանը,

20) մշակում և իրականացնում է թանկարժեք մետաղների, թանկարժեք քարերի, չմշակված թանկարժեք մետաղների և քարերի, թանկարժեք

մետաղներից ջարդոնի և թափոնների, թանկարժեք մետաղների հանքանյութերի և խտանյութերի ու թանկարժեք մետաղներ պարունակող հումքային ապրանքների բնագավառում քաղաքականությունը,

21) մշակում ու իրականացնում է արտաքին առևտրի կարգավորման ոլորտում «պետություն-մասնավոր հատված» համագործակցության միջոցառումներ,

22) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է առևտրային քաղաքականության, մասնավորապես՝ «Ազատ առևտրի գոտու մասին» Պայմանագրից բխող միջոցառումների մշակում և իրականացում,

23) ԱՊՀ համագործակցության շրջանակներում մշակում և իրականացնում է Հայաստանի Հանրապետության մրցունակ ապրանքների ցանկի տրամադրում,

24) ԱՊՀ համագործակցության շրջանակներում իրականացնում է արտադրանքի կարևորագույն ապրանքատեսակների արտադրության, սպառման, ներմուծման և արտահանման կանխատեսումային ցուցանիշների տրամադրում: